

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1(47)
2010 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանյան -
գլխավոր խմբագրի տեղակալ
Ղավիթ Մելքոնյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Ղանիելյան
Գագիկ Համբարձումյան
Արթուր Կաղարշյան
Սերգեյ Առաքելյան
Վիգեն Զոհարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝
ԴՇ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊԴ
իրավաբանական ֆակուլտետ:
Դեռ. 55-77-92

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
**10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:**

Դասիչ՝ 77771
Տպագրական 7 մանուկ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
1.04.2010
Հանձնված է տպագրության
27.04.2010

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО
И
ПРАВО

Номер 1 (47)
2010 г.

Главный редактор:

Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -

зам. главного редактора

Давид Мелконян -

ответственный секретарь

Геворг Даниелян

Гагик Амбарцумян

Артур Вагаршян

Сергей Аракелян

Виген Кочарян

Адрес редакции:

РА, 0025 Ереван,
ул. Алекса Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92

7 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 1.04.2010
Подписано к печати 27.04.2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՌՈՐԴՎԱՐԱԿԱՆ	4
ՔՐԵԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՂԱՏԱԿՄՈՒԹՅՈՒՆ	
Соловьев Александр	
СОХРАНИТЬ ПРЕЕМСТВЕННОСТЬ СИСТЕМЫ ПРИНЦИПОВ	
УГОЛОВНОГО ПРОЦЕССА.....5	
Սամվել Ղիլբանյան	
ԱԽՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ԾԱՐԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՔՐԵԱԿԱՆ	
ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ18	
Կրիստոֆեր Ջանակարիան	
ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ՝ ՈՐՊԵՍ ՂԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏ 27	
Դավիթ Մելքոնյան	
ՀՐԱՄԱԿԱՎԱՅԻՆ ՂԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....33	
Լյուդվիկ Դավթյան	
ՂԱՅՈՅ ԼԵԶՈՎԿ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՔՍՏԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ	
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԽՆՈՒՐԱՅԻՆ և ՊՐԱՑՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....40	
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Արման Սարգսյան	
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՂԱՅԱՍԱՎԻՆ	
ՂԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿ ԿՆԵՎԱԾ ԳՅՅ-Ի ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ	
ՂԱՄՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ49	
Սահամ Շիրազյան	
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱԿՈՎՈՐ ՏԱՏԵՍԱԿԱՆ ՍԱՎԿԱՅԱՆԵՐԻ	
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՑԵՐԸ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ58	
Դիանա Ղազարյան	
ԶԱՐԳԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՏԵՍԱԿԱՆ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՂԱՅԱՏԵՔՍՈՒՄ.....64	
Ани Акопян	
ИМПЛЕМЕНТАЦИЯ ЕВРОПЕЙСКОЙ КОНВЕНЦИИ О ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА И	
ОСНОВНЫХ СВОБОД В АКТАХ СУДА ЕС.....73	
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՂԱՏԱԿՄՈՒԹՅՈՒՆ	
Տարոն Սիմոնյան	
ՄԻՆԵՐԳԵՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՂԵՏՈՎԱՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱՎՈՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ...81	
ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Տիրայր Վարդապարյան	
ԿԱՐԳՎՈՐԱԿԱՆ ԶԱՅԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ՝ ԸՆՏ ՂԱՅԱՍԱՎԻՆ ՂԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ.....92	
ՈՒՍԱԽՈՂԻ ԱՄԲԻՈՆ	
Տիգրան Մարկոսյան	
ՎԱՐԿՎՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՂԱՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՋԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....98	

ՈՒՍՎԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԴԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՋՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տիգրան ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիրության
ֆակուլտետի մագիստրանտ

Վարկային պայմանագրի նախատիպ կարելի է համարել դեռևս հռոմեական իրավունքում հայտնի փոխառության պայմանագիրը (տասս), որը եղել է ռեալ, միակողմ և անհատուց պայմանագիր¹: Վարկային պայմանագրի առաջացման պատճառն այն էր, որ փոխառության պայմանագրի միջոցով չեղ ապահովվում գույքային շրջանառության մասնակիցների, այդ բայց՝ գործարարների՝ անհրաժեշտության դեպքում փոխառություն ստանալու անվերապահ հնարավորությունը, քանի որ փոխառության պայմանագրի շրջանակներում անհնար էր փոխառության հարկադրել տրամադրելու գումարը: Այդ պատճառով էլ ֆինանսական շուկայում, որտեղ իրականացվում է «փողերի առևտուրը», անհրաժեշտություն էր զգացվում այլ՝ կոնսենսուալ բնույթի պայմանագրի, ինչպիսին վարկային պայմանագիրն է²:

Դայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի³ (այսուհետև՝ Քաղ. օր.) 887 հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (Վարկասում) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառության, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացած գումարը և տոկոսներ վճարել (1-ին կետ): Վերոհիշյալ նորմից հետևում է, որ վարկային պայմանագիրը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կոնսենսուալ, երկկողմանի և հատուցելի պայմանագիր է⁴:

Այն կոնսենսուալ է, որովհետև համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր եական պայմանների վերաբերյալ, որպիսիք են՝ տոկոսները, այլ բանկային ծառայությունների արժեքը, կողմերի գույքային պատասխանատվությունը պայմանագրի խախտման դեպքում պայմանագրի դադարման (միակողմանի լուծման) կարգը և այլն: Հետևաբար, վարկային պայմանագրի կնքման պահից վարկառուն վարկատուի նկատմամբ վարկը տրամադրմել հարկադրելու իրավունք է ստանում:

Այդուհանդերձ, վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթը ունի որոշակի առանձնահատկություններ, քանի որ Քաղ. օր.-ում նախատեսվում է պայմանագրով կատարելուց միակողմանի հրաժարվելու կողմերի իրավունքը: Մասնավորապես, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասսամբ հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետին չի վերադարձվի: Վարկառուն էլ, իր հերթին, իրավունքը ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկն ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով (Քաղ. օր. 889 հոդված):

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ Քաղ. օր. 887 հոդվածի համաձայն վարկային պայմանագիրը կրում է կոնսենսուալ բնույթ՝ գործնականում երեմն կնքվում են պայմանագրով (Քաղ. օր. 889 հոդված):

դրամական միջոցների փոխանցման պահից: Նրանց իրավաբանական էռլեյունը մասնագիտական գրականության մեջ տարրեր մեկնաբանություններ է ստանում: Ենթադրվում է, որ նման պայմանագրերը հանդիսանում են վարկային պայմանագրի առանձին տեսակներ, որոնց կնքումը թեև ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով, բայց և արգելված չէ⁵: Կարծում ենք՝ նման պայմանագրերը վարկային պայմանագրի տեսակ որպես չի համապատասխանում վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթին, քանի որ դրամական միջոցների փոխանցման պահից կնքված համարվելը բնութագրական է փոխառության պայմանագրին, եթե նույնիսկ փոխառուի կողմում հանդիս է զայխ բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը: Ասվածի օգտին է խոսում նաև այն հանգանանքը, որ «Վարկային կազմակերպությունների մասին»⁶ ՀՀ օրենքի 8 հոդվածի համաձայն փոխառություն տրամադրելը հանդիսանում է վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական գործառնություններից մեկը, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին»⁷ ՀՀ օրենքի 34 հոդվածը հնարավորություն է տալիս բանկերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բույսության հիմնան վրա իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին»⁸ ՀՀ օրենքում ուղղակիորեն չնախատեսված գործառնություններ, այդ թվում՝ տրամադրել փոխառություններ:

Վարկային պայմանագրի կոնսենսուալ էռլեյունից էլ բխում է նրա երկկողմանի բնույթը⁹: Վարկային պայմանագրիը երկկողմանի է, քանի որ երկու կողմերն էլ ունեն և իրավունքներ, և պարտականություններ: Մասնավորապես, վարկառուն վարկային պայմանագրով ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու վերադարձնել այդ դրամական միջոցները պայմանագրով նախատեսված ժամ-

կետը լրանալիս և տոկոսներ վճարել դրանցից: Վարկառուն էլ, իր հերթին, ձեռք է բերում իրավունք պահանջելու իրեն հանձնել պայմանագրով նախատեսված միջոցները և ստանձնում է վարկառուին տոկոսներ վճարելու և պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն:

Վարկային պայմանագրի հատուցելի պայմանագրի է: Վարկային պայմանագրի հատուցելի բնույթը արտահայտվում է նրանում, որ վարկառուն պարտավոր է վարկի օգտագործման դիմաց վճարել տոկոսներ: Դրամական միջոցները օգտագործելու համար տոկոսները հաշվարկվում են ոչ թե վարկային պայմանագրի կնքման պահից, այլ դրամական միջոցները փաստացի ստանալու պահից: Դա պայմանագրոված է այն հանգանանքով, որ տոկոսները վարկի օգտագործման համար վճարվում են դրամական միջոցների ռեալ օգտագործման ժամանակահատվածի համար¹⁰: Տոկոսները պետք է սահմանվեն վարկային պայմանագրով թաղ. օր. 879 հոդվածի 1-ին կետի պահանջի պահպանմաբ, ընդ որում, ենթելի պայմանագրի պայմանները միակողմանի փոփոխելու անթույլատրելիությունից, ֆինանսական անկայունության և հիպերինֆլյացիայի պայմաններում վարկային պայմանագրում պետք է հստակ նախատեսվեն նաև տոկոսների հաշվարկային դրույթի փոփոխման և վարկի դիմաց վճարման պարբերականության վերանայման հիմքերը¹⁰: Որպես այդպիսի հիմք կարելի է դիտարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման դրույթի բարձրացումը: Վարկային պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպում վարկառուն իրավունք է ստանում միակողմանի փոփոխել վարկային պայմանագրիը, ինչը համապատասխանում է թաղ. օր. 466 հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ չկա միանական մոտե-

ՈՒՍՎԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

ցում, թե արդյոք վարկային պայմանագիրը կարելի է դիտարկել որպես ինքնուրույն քաղաքացիահրավական պայմանագիր: Նշված հարցի պարզաբանման նպատակով ընդունված է այն համեմատել փոխառության պայմանագրի հետ: Ուստմնասիրությունների արդյունքում հեղինակների մի մասը (Ռ. Ի. Կարիմուլիմը, Ե. Ա. Ֆլեյշիցը և այլք) վարկային պայմանագիրը որակում են որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, իսկ մյուսները (Ե.Ա. Պավլովսկին, Ս. Կ. Սոլոմինը և այլք)` որպես ինքնուրույն քաղաքացիահրավական պայմանագիր¹¹:

Այսպես, ըստ Ռ. Ի. Կարիմուլիմի. «Փոխառության և վարկային պայմանագրերը ունեն առնվազն երեք ընդհանուր հատկանիշներ՝ պայմանագրի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը մյուս կողմին, փոխառուի պարտականությունը՝ վերադարձնել ստացած կապիտալը, և կողմերի միջև հարաբերությունների տևական բնույթը: Միևնույն ժամանակ, փոխառության պայմանագիրը ունի ավելի լայն սուբյեկտային (փոխառուի կողմուն կարող են հանդես գալ ոչ միայն վարկային կազմակերպությունները) և առարկայական (փոխառության պայմանագրի առարկա կարող են լինել ոչ միայն դրամական միջոցները) կազմ, ինչպես նաև պարտադիր չէ դրամում վարձատրության վերաբերյալ պայմանի նախատեսումը: Վերոգրյալ հետևում է, որ ռուսական քաղաքացիական իրավունքը վարկային պայմանագիրը դիտարկում է որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ»¹²:

Իսկ Ե. Ա. Սոլիսանովը նշում է, որ վարկային պայմանագիրը և սուբյեկտային կազմի, և առարկայի առումով ունի կիրառման ավելի ներ ոլորտ՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի: Այս հիմնավորմանը նա հաճգում է այն եզրակացության, որ վարկային պայմանագիրը փոխա-

ռության պայմանագրի հասուլ, ինքնուրույն տարատեսակ է¹³: Վերոշարադրյալ տեսակետի պաշտպանությամբ է հանդես եկել նաև Ե.Ա. Ֆլեյշիցը: Ըստ նրա՝ վարկային և փոխառության պայմանագրերը ունեն մեկ ընդհանուրություն. երկուսի դեպքում էլ փոխառուն պարտավոր է վերադարձնել իրեն տրամադրված դրամական միջոցները¹⁴:

Թիս չեն նաև այն տեսակետի կողմնակիցները, ըստ որոնց՝ վարկային պայմանագիրը ինքնուրույն քաղաքացիահրավական պայմանագրի է: Այսպես, Ե. Ա. Պավլովսկին փոխառության և վարկային պայմանագրերի վերաբերյալ գրում է. «Քաղաքացիական օրենսդրությանը հայտնի են երկու ինքնուրույն պայմանագրեր՝ փոխառության և վարկային: Նշված պայմանագրերի տարբերությունը նախ և առաջ այն է, որ վարկային պայմանագրով վարկատու կարող են լինել բանկերը և այլ վարկային կազմակերպություններ: Ի տարբերություն փոխառության պայմանագրի՝ վարկային պայմանագրի առարկա կարող են լինել միայն դրամական միջոցները: Ի վերջո, վարկային պայմանագրը կոնսենսուալ պայմանագրի է»¹⁵: Վարկային պայմանագիրը որպես ինքնուրույն քաղաքացիահրավական պայմանագրի է դիտարկում նաև Ս. Կ. Սոլոմինը, որը մասնավորապես նշում է. «Վարկային պայմանագիրը հնարավոր կլիներ որպես փոխառության հատուկ տարատեսակ, եթե դա բխեր օրենքի բովանդակությունից: Զարմանալի է, սակայն օրենսդիրը այդ մասին որևէ նշում չի արել համապատասխան գլուխներում: Բացի այդ՝ դժվար է պատկերացնել, որ ռեալ պայմանագրի (փոխառության պայմանագիր) տեսակը կարող է լինել կոնսենսուալ պայմանագրի (վարկային պայմանագիր): Յետևաբար, կարելի է եզրակացնել, որ տարբեր կառուցակարգեր (ռեալ և կոնսենսուալ) ունեցող պայմանագրերը չեն կարող հանդիսանալ մեկը մյուսի տարատեսակ»¹⁶:

Մեր կարծիքով, վարկային պայմանա-

գիրը փոխառության պայմանագրի հատուկ տեսակ է և հարաբերակցվում է վերջինիս, ինչպես տեսակը սեղին: Այս մոտեցումը պայմանավորված է այն հաճամանքով, որ երկու պայմանագրերի դեպքում էլ ծագում է փոխատուի պարտականությունը՝ պայմանագրով նախատեսված ժամկետում վերադարձնելու ստացած դրամական միջոցները: Իսկ տեսակի և սեղի միջև եղած կապերը ենթադրում են, որ տեսակը, ունենալով սեղին վերաբերող բոլոր հատկանիշները, միաժամանակ ունի որոշ առանձնահատուկ գծեր, որոնք ել թույլ են տալիս այն առանձնացնել որպես սեղի առանձին տեսակ: Որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ՝ վարկային պայմանագրին ունի հետևյալ չորս առանձնահատկությունները:

1. Վարկային պայմանագրիը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կրում է կոնսենսուալ բնույթ,

2. մյուսը դրսևորվում է վարկային պայմանագրի սուբյետային կազմի առումով: Մասնավորապես, վարկային պայմանագրով որպես վարկատու կարող է հանդես գալ միայն բանկը կամ այլ վարկային կազմերապություն: Հետևաբար, այն դեպքում, եթե որոշակի դրամական միջոցներ հանձնելու պարտականություն նախատեսող պայմանագրով որպես վարկատու հանդես է գալիս բանկ կամ այլ վարկային կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունը, ապա նման պայմանագրիը չի կարող որակվել որպես վարկային: Այդ պայմանագրիը, ըստ էության, փոխառության պայմանագրի է, որը տվյալ դեպքում կնքված կիամարվի դրամական միջոցների փոխանցման պահից,

3. Վարկային պայմանագրի առարկա կարող են լինել միայն դրամական միջոցները, բայց ոչ երբեք տեսակային հատկանիշներով որոշվող իրերը՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի,

4. Վարկային պայմանագրիը միշտ կրում է հատուցելի բնույթ, այսինքն՝ վարկառուն ստացած դրամական միջոցները

օգտագործելու համար պարտավոր է վճարել համապատասխան գումարի համար հաշվարկած տոկոսներ:

Ընդ որում, վերջին երկու հատկանիշները առանձին չեն հանդիսանում վարկային պայմանագրի առանձնացման հիմք, քանի որ դրանք բնութագրական են դրամական միջոցների ցանկացած հատուցելի փոխառության պայմանագրի: Կարելի է ասել, որ դրանք լրացնում են վարկային պայմանագրի ընդիհանուր բնութագիրը¹⁷:

Կարծում ենք՝ այն տեսակետի օգտին, որ վարկային պայմանագրիը փոխառության հատուկ տեսակ է, խոսում է նաև Քաղ.օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրավուում են սույն օրենսգրի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»: Այսպիսով, Քաղ. օր.-ի փոխառության պայմանագրի մասին բոլոր կանոնները՝ փոխառության պայմանագրի տոկոսների, փոխառուի՝ փոխառության գումարը վերադարձնելու պարտականության, փոխառուի կողմից փոխառության պայմանագրի պայմանները խախտելու հետևանքների, փոխառության նպատակային բնույթի վերաբերյալ, ուղղակիորեն կիրավուում են վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ, քանի որ օրենքից և վարկային պայմանագրի էռելունից այլ բան չի բխում¹⁸:

Ուշադրության է արժանի վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ փոխառության պայմանագրի մասին կանոնների կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական առյամի դիրքորոշումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարան), քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դա-

ՈՒՍՎԱՆՈՂԻ ԱՄԲԻՈՆ

տարանի 16.12.2008թ որոշման դեմ, Եզրահանգել է. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում օրենտիոր, ելենով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությանը, բացառությամբ այն դեպքի, եթե համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով»¹⁹: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը, անտեսելով Քաղ. օր.-ի 881 հոդվածի 1-ին կետի պահանջը, նշված գործով իրավաչափի է համարել վարկային պայմանագրով նախատեսված ժամկետանց վարկի նկատմամբ սահմանված տարեկան 28% տոկոսադրույթի և ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ յուրաքանչյուր օրվա հանար սահմանված 0.2% չափով տույժի վերաբերյալ պայմանները:

Մեր կարծիքով, նշված որոշմամբ չի ապահովվում օրենքի ճիշտ մեկնարանությունը հետևյալ պատճառարանությամբ.

Քաղ. օր.-ի 9 հոդվածի 1-ին պարբերության համաձայն. «Քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնարանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ»:

Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նա-

խատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

«Իրավական ակտերի մասին»²⁰ ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ մասի համաձայն. « Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը...»:

Վերոհիշյալ նորմերի համադրումից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ Քաղ. օր.-ի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում միայն այն դեպքում, եթե այլ բան է նախատեսված Քաղ. օր.-ի 47 գլխի կանոններով և վարկային պայմանագրով: Ընդ որում, այս երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է Քաղ. օր.-ի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չկիրառելու համար: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը, մեր համոզմամբ, սխալ մեկնաբանելով Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետը, փոխառության պայմանագրի վերաբերյալ կանոնների կիրառումը բացառելու համար բավարար է համարել միայն վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին չհակասող այլ կանոններ նախատեսող վարկային պայմանագիրը:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման պայմաններում, եթե այլ բան նախատեսված լինի վարկային պայմանագրով, գործնականում բացառվում է վարկային պայմանագրի՝ որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակի, կարգավորման նպատակով փոխառության պայ-

мнинаворի վերաբերյալ կանոնների կիրառումը: Բացի այդ՝ Քաղ.օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի այդպիսի մեկնաբանությունը լայն հնարավորություն է ընձեռում բանկերին և այլ վարկային կազմակերպություններին՝ շրջանցելու Քաղ.օր.-ի 879, 881 հոդվածներով նախատեսված սահմանափակումները: Յետևաբար գտնում ենք, որ ճիշտ իրավակիրառ պրակտիկա ձևավորե-

լու նպատակով անհրաժեշտ է վարկային պայմանագիրը դիտարկել որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, որի կարգավորման նպատակով սուրսիդիար կարգով կիրառման ենթակա են փոխառության պայմանագրի մասին կանոնները՝ Քաղ.օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պայմանով:

¹Տե՛ս **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна.** Римское право (базовый учебник). Перевод с македонского д. ю. н. проф. **В. А. Томсина** и **Ю. В. Филиппова** /Под ред. проф. **В. А. Томсина**. — М.: Изд-во “ЗЕРЦАЛО”, 1999, էջեր 246-247:

²Տե՛ս Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [**Витрянский В. В. и др.**]; отв. ред. — **Е. А. Суханов**. 3-е изд., перераб. и доп. — М., Изд-во “Волтерс Клувер”, 2006, էջ 413:

³Տե՛ս ՀՀՊՏ 10.08.98./17(50), 05.05.1998:

⁴Տե՛ս **Олейник О. М.** Основы банковского права: Курс лекций. — М.: Изд-во “Юристъ”, 1997, էջ 321:

⁵Տե՛ս Гражданское право: Учебник в 3 т. Т. 2 / **Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, К. М. Арсланов [и др.]**; под. ред. **А. П. Сергеева**. — М.: Изд-во “РГ-Пресс”, 2009, էջեր 586-587:

⁶Տե՛ս ԾԾԲ 03.07.02./23 (198), 29.05.2002:

⁷Տե՛ս ՀՀԱԺՏ 1996/12, 30.06.1996:

⁸Տե՛ս Гражданское право. Учебник. Часть II / Под ред. **А. П. Сергеева, Ю. К. Толстого**. — М.: Изд-во “ПРОСПЕКТ”, 1999, էջ 435:

⁹Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный). Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д-р юрид. наук, профессор **О. Н. Садиков**. — М. Изд-во “ИНФРА-М”, 2008, էջեր 467-468:

¹⁰Տե՛ս Банковское право: учебник для вузов / **Н. Д. Эриашвили**. — 5-е изд., перераб. и доп. — М., Изд-во “ЮНИТИ-ДАНА”, 2007, էջ 202:

¹¹Տե՛ս **Витрянский В. В.** Договор займа: общие положения и отдельные виды договора. — М.: Изд-во “Статут”, 2004, էջեր 251-252:

ра. — М.: Изд-во “Статут”, 2004, էջ 252:

¹² **Брагинский М. И., Витрянский В. В.** Договорное право. Книга пятая. В двух томах. Том 1: Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований. — М.: Изд-во “Статут”, 2006, էջ 338:

¹³ Տե՛ս Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [**Витрянский В. В. и др.**]; отв. ред. — **Е. А. Суханов**. 3-е изд., перераб. и доп. — М., Изд-во “Волтерс Клувер”, 2006, էջեր 413-414:

¹⁴ Տե՛ս **Ефимова Л. Г.** Банковское право. Учебное и практическое пособие. — М.: Изд-во “БЕК”, 1994, էջ 180:

¹⁵ Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный). Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д-р юрид. наук, профессор **О. Н. Садиков**. — М. Изд-во “ИНФРА-М”, 2008, էջ 459:

¹⁶ Տե՛ս **Соломин С. К.** Банковский кредит. Проблемы теории и практики. Чита, Изд-во “Юстицинформ”, 2009, էջեր 105-106:

¹⁷ Տե՛ս **Витрянский В. В.** Договор займа: общие положения и отдельные виды договора. — М.: Изд-во “Статут”, 2004, էջեր 251-252:

¹⁸ Տե՛ս **Ս. Գ. Մեղրյան**. Վարկային և հաշվարկային հարաբերությունների քաղաքացիական կարգավորումը, Երևան, 2000, էջեր 25-26:

¹⁹ Քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 24.17.2009թ. թիվ ԱՎԴ/4/0145/02/08 որոշումը:

²⁰ Տե՛ս ՀՀՊՏ 21.05.02./15(190), 03.04.2002: